ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 121 -Ա

« 18 » ՄԱՅԻՍ 2022Թ

«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ԱՆՈՒՇ ԹԱՐՎԵՐԴՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 216-րդ հոդվածի, 218-րդ հոդվածի 1-ին մասի, 220-րդ հոդվածի 1-ին մասի, 222-րդ հոդվածի, 223-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 224-րդ և 226-րդ հոդվածների, 227-րդ հոդվածի 2-րդ մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի 1-մասի 4-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով 2021 թվականի դեկտեմբերի 3-ից 20-ն ընկած ժամանակահատվածում աուդիտորական առաջադրանքի իրականացման նպատակով ստեղծված աշխատանքային խմբի կողմից «Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում իրականացված համապատասխանության և ներքին հսկողության համակարգի գնահատման աուդիտի վերջնական հաշվետվությունը, «ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 48-րդ կետի 21-րդ ենթակետը, պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի հետ 2022 թվականի հունվարի 17-ին կնքված թիվ 485 աշխատանքային պայմանագրի 2.2-րդ կետի «դ» ենթակետը և հաշվի առնելով Ա. Թարվերդյանի 27.04.2022թ. գրավոր բացատրությունը, հարուցված կարգապահական վարույթի շրջանակում 06.05.2022թ. արձանագրված լրացուցիչ պարզաբանումները, ինչպես նաև ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2022 թվականի փետրվարի 4-ի թիվ 37-Ա որոշմամբ կարգապահական տույժ կիրառված լինելու հանգամանքը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար «ՀՀ Վայոց ձորի մարզի «Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Անուշ Թարվերդյանին

ենթարկել կարգապահական պատասխանատվության՝ կիրառելով «խիստ նկատողություն» կարգապահական տույժը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգով Ա. Թարվերդյանին ծանուցելու հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

5/18/2022

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ք. Եղեգնաձոր